ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների հայտարարությունը՝ COVID-19 համավարակի պայմաններում ՄԱԿ գլխավոր քարտուղարի՝ համաշխարհային զինադադարի կոչին աջակցելու վերաբերյալ

26 մայիսի, 2020թ.

Մենք՝ ՀԱՊԿ անդամ պետությունների ԱԳ նախարարներս, մեր համերաշխությունն ու աջակցությունն ենք հայտնում ՄԱԿ գլխավոր քարտուղարի՝ աշխարհի յուրաքանչյուր անկյունում գլոբալ զինադադարի անհապաղ հաստատման մասին կոչին՝ պայմանավորված նոր տիպի կորոնավիրուսի տարածման արդյունքում ի հայտ եկած սպառնալիքով:

Հանրային առողջապահության ոլորտում առկա և միջազգային նշանակություն ունեցող արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ երկրների մեծամասնության բնակչությունը ենթակա է վարակման, վարակը թիրախավորում է բոլորին՝ անկախ ռասայական, էթնիկ կամ սոցիալական պատկանելիությունից, ազգությունից կամ դավանանքից, քաղաքական համոզմունքներից: Ամենաբարձր գինը վճարում են բնակչության առավել խոցելի շերտերը: Շարունակվող հակամարտություններից և բնական աղետներից տուժող հսկայական թվով մարդիկ, այդ թվում՝ կանայք և երեխաներ, զրկված են կացարանից և գոյության միջոցներից, չունեն հիգիենայի տարրական միջոցներից և ժամանակակից բժշկությունից օգտվելու հնարավորություն:

Համավարակին ընդառաջ վճռականորեն հայտարարում ենք, որ միջազգային հանրությանն առաջին հերթին անհրաժեշտ է կենտրոնանալ առարկայական երկխոսության և միասնական գործողությունների վրա՝ ապահովելու պրակտիկ միջոցներ նոր տիպի կորոնավիրուսի և դրա հետևանքների դեմ պայքարում:

Մեր խորին մտահոգությունն ենք հայտնում շարունակական զինված հակամարտությունների և միջադեպերի վերաբերյալ, որոնց արդյունքում անմիջական վտանգի և լուրջ սպառնալիքի է ենթարկվում քաղաքացիական բնակչությունը, ինչը միջազգային հումանիտար իրավունքի կոպիտ խախտում է:

Անընդունելի ենք համարում միակողմանի հարկադրանքի և պատժամիջոցների կիրառումը: Չափազանց կարևոր ենք համարում բոլոր կարիքավորներին կենսական անհրաժեշտություն ներկայացնող օգնության տրամադրման համար միջանցքների ապահովումը: Մարդկային կյանքերի փրկության ճանապարհին չպետք է լինեն որևէ խոչընդոտներ և արգելքներ:

Միևնույն ժամանակ համոզված ենք, որ համավարակի և դրա դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ներկա իրադրությունում արված անհապաղ և համաշխահային զինադադարի կոչերը չեն կարող տարածվել ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից միջազգային ահաբեկչական կազմակերպություններ ճանաչված խմբավորումների չդադարող գործունեությանը

հակազդելու վրա: Ընդ որում վերոնշյալ կազմակերպությունների՝ իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում օրինական կառավարությունների գործառույթները իրականացնելու փորձերը չպետք է հանգեցնեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից այդ կազմակերպությունները որպես ահաբեկչական դասակարգելուց հետքայլ անելուն և քաղաքական գործընթացներում լեգիտիմ մասնակիցների կարգավիճակ ստանալուն: Անհրաժեշտ է չնվազեցնել միջազգային հանրության ուշադրությունը միջազգային ահաբեկչության գլոբալ սպառնալիքի նկատմամբ և շարունակել ընդլայնել այդ չարիքի դեմ պայքարում համապատասխան ջանքերը ազգային և բազմակողմ մակարդակներում:

Վստահություն ենք հայտնում տարածայնությունների շուտափույթ հաղթահարման, վստահության վերականգնման, համագործակցության կարգավորման և միջազգային հանրության ընդհանուր սպառնալիքի՝ COVID-19-ի դեմ միասնական հակազդման առնչությամբ՝ հանուն միջազգային անվտանգության արդյունավետ ապահովման:

Կոչ ենք անում աշխարհի բոլոր երկրներին, կազմակերպություններին և հակամարտող կողմերին ականջալուր լինել ՄԱԿ գլխավոր քարտուղարի կոչին և անհապաղ համապատասխան քայլեր ձեռնարկել, նպաստել աշխարհում ռազմական գործողությունների մորատորիումի անհապաղ հաստատմանը, հանդես գալ միջազգային հանրության միասնության դիրքերից, վերացնել առևտուրը խոչընդոտող սահմանափակումները, նոր տիպի կորոնավիրուսին արդյունավետորեն հակազդելու նպատակով աջակցություն ցուցաբերել անցումային և զարգացող տնտեսություններ ունեցող երկրներին և պատրաստակամություն հայտնել՝ շարունակելու միասնական աշխատանքը COVID-19 համավարակի դեմ պայքարի և դրա բացասական հետևանքների հաղթահարման ուղղությամբ:

Ռուսերեն տարբերակը՝ ստորև.

ЗАЯВЛЕНИЕ
министров иностранных дел государств–членов ОДКБ о поддержке призыва Генерального секретаря ООН к глобальному прекращению огня в связи с пандемией COVID-19

26 мая 2020 года

Мы, министры иностранных дел государств – членов ОДКБ, выражаем нашу солидарность и поддержку призыву Генерального секретаря ООН к немедленному и

глобальному прекращению огня во всех уголках мира в связи с угрозой, вызванной распространением коронавирусной инфекции нового типа — COVID–19.

В условиях чрезвычайной ситуации в области общественного здравоохранения, имеющей международное значение, когда заражению вирусом нового типа подвержено население большинства стран, инфекция поражает всех, независимо от расовой, этнической или социальной принадлежности, национальности или вероисповедания, политических убеждений, и самую высокую цену платят наиболее уязвимые слои населения. Огромное количество людей, страдающих от продолжающихся конфликтов и стихийных бедствий, в их числе женщины и дети, лишены крова и средств к существованию и не имеют доступа к элементарным средствам гигиены и достижениям современной медицины.

Перед лицом пандемии решительно заявляем, что мировому сообществу необходимо в первую очередь сосредоточиться на предметном диалоге и совместных действиях по обеспечению практических мер в борьбе с COVID–19 и ее последствиями.

Выражаем глубокую обеспокоенность в связи с продолжающимися вооруженными конфликтами и инцидентами, в ходе которых непосредственной опасности и серьезной угрозе подвергается гражданское население, что является грубым нарушением норм международного гуманитарного права.

Считаем неприемлемым применение односторонних принудительных мер и санкций. Полагаем крайне важным организацию коридоров для доставки жизненно необходимой помощи всем нуждающимся. На пути к спасению человеческих жизней не может быть никаких препятствий и преград.

В то же время убеждены, что в нынешних условиях пандемии коронавируса и принимаемых мер по борьбе с ней призывы к немедленному и глобальному прекращению огня не могут распространяться на противодействие непрекращающейся активности международных террористических организаций, признанных таковыми Советом Безопасности Организации Объединенных Наций. При этом попытки упомянутых организаций взять на себя функции законных правительств на находящихся под их контролем территориях не должны вести к отходу от их квалификации Советом Безопасности ООН в качестве террористических и получению ими статуса легитимных участников политических процессов. Необходимо не снижать внимания мирового сообщества к глобальной угрозе международного терроризма и продолжать наращивать соответствующие национальные и многосторонние усилия по борьбе с этим злом.

Выражаем уверенность в скорейшей необходимости преодоления разногласий, восстановления доверия, налаживания сотрудничества и совместного противодействия общей угрозе глобального сообщества — COVID–19 — во имя эффективного обеспечения международной безопасности.

Призываем все государства мира, организации и конфликтующие стороны прислушаться к призыву Генерального секретаря ООН и незамедлительно предпринять соответствующие шаги, содействовать немедленному установлению моратория на боевые действия по всему миру, выступить за единство международного сообщества, снятие торговых барьерных ограничений, необходимость оказания содействия странам с переходной и развивающейся экономикой для эффективного противодействия новой коронавирусной инфекции и подтвердить готовность к продолжению сплоченной работы по борьбе с пандемией COVID–19 и устранению ее негативных последствий.